



ՀՀ, Երևան 0010, Կառավարական 3-րդ մասնաշենք,  
Հայաստան համահայկական հիմնադրամ  
Հասարակութեան հետ կապերու բաժին  
Հեռ: + (374 10) 521505

[pr@himmadram.org](mailto:pr@himmadram.org)  
[www.himmadram.org](http://www.himmadram.org)

## Մամուլի հաղորդագրություն

### «Հայաստան» համահայկական հիմնադրամի հովանավորությամբ եւ աջակցությամբ Ակնադրիւր համայնքին մէջ կառուցուեցաւ համայնքային կեդրոն՝ գիւղապետարան, բժշկական կեդրոն, գրադարան եւ հանդիսասրահ

**Երևան, Յուլիս 6, 2010թ.** : Սոյն թուականի Յուլիս 4-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամի ջանքերուն եւ հետեւողական աշխատանքին շնորհիւ Տաւուշի մէջ կայացաւ Ակնադրիւր համայնքի նորաշէն համայնքային կեդրոնի բացման հանդիսութիւնը: Սօտ 60 միլիոն ՀՀ դրամ արժողութեամբ նախագիծը իրականացաւ «Հայաստան» հիմնադրամի Ֆրանսայի տեղական մարմինի հովանավորությամբ:

Բացման հանդիսութեան ներկայ էին «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրէն Արա Վարդանեան, Տաւուշի փոխմարզպետ Վահէ Վարդապետեան, համայնքի ղեկավար Կարէն Դոլմազեան, նախագիծի բարերար Ճորճ Դաւիթեան իր տիկնոջ հետ եւ Ֆրանսայէն եկած՝ շուրջ յիսուն հոգիէ բաղկացած բարերարներու պատուիրակութիւնը: Դաւիթեան ընտանիքը միշտ մասնակցած է Ֆրանսայի տեղական մարմինի կազմակերպած դրամահաւաքներուն եւ ան կը համարուի «Հայաստան» հիմնադրամի նուիրատու անդամ:

Հանդիսութեան մասնակցելու միտումով ժամանած հիւրերուն գիւղը դիմաւորեց Հայաստանի եւ Ֆրանսայի դրօշակներով, աղ ու հացով եւ երգ ու պարով: Պարոն Դաւիթեան, որ կը փափաքէր գիւղացիներուն ողջոյնի խօսք ըսել, յուզուած՝ միայն մէկ նախադասութիւն կրցաւ արտասանել. «Ուրախ եմ, որ այսօր հոս այսքան մարդ հաւաքուած է...»

Երկու յարկ ունեցող նորկառոյց համայնքային կեդրոնին մէջ կը գտնուին գիւղապետարանը, գրադարանը, յիսուն հոգիի համար նախատեսուած հանդիսասրահը եւ յատուկ մուտքով ապահովուած բժշկական կեդրոնը:

Նորակառոյց համայնքային կեդրոնը կարելոր ձեռքբերում է գիւղի բնակչութեան համար: Երկար տարիներ գիւղապետարանը երկու յարկանի խարխլած շէնքի մը մէջ կը գործէր, ուր մինչ օրս ապաստանած է փախստականներու երկու

«Հայաստան» համահայկական հիմնադրամը շահոյթ չհետապնդող կազմակերպութիւն է, որը հիմնադրուած է 1992թ-ին, որուն նպատակն է խթանել մարդասիրական գործունէութիւնը եւ տարբեր հաստատութիւններու եւ կառոյցներու մասնաճիւղերու զարգացումը ՀՀ-եան եւ ԼՂՀ-եան մէջ: Հիմնադրամը ունի 18 տեղական մարմին ամբողջ աշխարհի մէջ:

ընտանիք, գիւղը չունէր հանդիսասարահ, գրադարանը կիսակառույց, խոնաւ շէնքի մը մէջ էր կը գտնուէր, իսկ բժշկական կեդրոնը՝ մետաղեայ տնակի մէջ: «Հայաստան» հիմնադրամի իրագործած ծրագիրին շնորհիւ լուծուեցան վերոյիշեալ բոլոր կենսական խնդիրները:

«Երկու ամիս առաջ, Ակնադբիւր համայնքին մէջ խմելու ջուր հայթայթելու համար նախատեսուած ջրաբաշխման համակարգի բացման հանդիսութեան ժամանակ, գիւղի բնակիչներուն խոստացայ, որ մօտ աստենէն ուրախութեան այլ առիթ եւս պիտի ունենանք, ինչը իրականացաւ եւ այսօր մենք կը տօնենք համայնքին համար էական նշանակութիւն ունեցող համայնքային կեդրոնի բացումը»,- ողջոյնի խօսքին մէջ ըսաւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրէն Արա Վարդանեան:

Շնորհակալական խօսք ըսին փոխարգպետը, համայնքի ղեկավարը, գիւղի բնակիչները:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գիւղերու զարգացման եւ բարեկարգման միտումով իրագործած ծրագիրներուն արդիւնաւետութիւնը, Ակնադբիւրի օրինակով, ակնյայտ է: Համահայկական նուիրումի շնորհիւ, անցած երեք տարիներու ընթացքին լուծուեցան գիւղի բնակիչներուն համար կենսական շարք մը խնդիրներ. Կառուցուեցաւ կազաբաշխման համակարգ (հովանաւոր՝ Մայր աթոռ Սուրբ Էջմիածին), ոռոգման ջրատար համակարգ (հովանաւոր՝ «Հայաստան» հիմնադրամի ԱՄՆ Արեւելեան շրջանի տեղական մարմին), Խմելու ջուրի համակարգ (հովանաւոր՝ Գանատայի ՀՅԴ յանձնախումբ): Ենթակառուցուածքային նշուած նախագիծերէն բացի, այս տարիներու ընթացքին իրականացան համայնքի կեանքին մէջ նոյնքան էական շարք մը այլ ծրագիրներ եւս, ինչպէս՝ դպրոցի մարզասրահի վերակառուցումը (շնորհիւ Կիպրոսի Խորհրդարանի հայազգի պատգամաւոր Վարդգէս Մահտէսեանի նուիրատութեան), համակարգիչի համար նախատեսուած յատուկ դասարանի մը ստեղծումը (շնորհիւ Նիւ եորքաբնակ Լոուրէնթ Փաուլաքի նուիրատութեան): Գիւղատնտեսութեամբ զբաղող բազմաթիւ անձանց տրամադրած են գիւղատնտեսական թեքնիք անհրաժեշտ պարագաներ, սերմացու, պարարտանիւթ, տնկիներ, անապահով շարք մը ընտանիքներ ստացած են մարդասիրական օգնութիւն:

Ակնադբիւրը Հայաստանի հնագոյն բնակավայրերէն է, ուր այսօր կը բնակի մօտ հինգ հարիւր մարդ: Այն հիմնադրուած է 451 թուականին՝ ի պատիւ սպարապետ Վարդան Մամիկոնեանի:

**«Հայաստան» համահայկական հիմնադրամ**  
*\* նշել արթիւրը*